զոր կարի մեծարեաց պապն, եւ արար պարգեւ, եւ հաղորդեաց դնա, եւ զայլն»։ Եւ յետոյ դարձեալ ասէ. «Եւ հաւաքեաց պապն առ ինքն զամենայն պատուաւորս, եւ ի խորհուրդ մտեալ նոքօք՝ դրեաց գիր հրամանաւ սրբոյ առաքելոցն ի նոցա երեսացն, թէ հայոց պատրիարգն անկոյս ծուլուն ուների իշխանութիւն, եւ կալցի ի վերայ ազգին հայոց, եւ այլն»։ Եւ ապա ի վերջն դարձեալ ասէր պապն. «Եւ վասն զի մեծ ճանապարհ է ի մէջ իմ եւ եղբօրն իմոյ հայոց պատրիարգին, առաքեցի նմա զվկայսն, եւ զպսակն, եւ զկօշիկն, զի զայն զգեցեալ պատարագեսցէ մատանեաւ հանդերձ.» եւ ասէ ցեպիսկոպոսն գրիգոր, «տար եւ զգեցո պատրիարգին, եւ յայնմ հետէ նմա լիցի պատիւ եւ իշխանութիւն, եւ այլն։» Զայս պատմէ վարդապետն վարդան։»

Նոյնպէս վարդան Արքեպ. Ցունանեան 1703ին առ Եւդոկիացիս գրած «Թուղթ քաջալերական» գրքին մէջ (Տաշեան, էջ 112) կը յիշէ Ծովհ. Խուլը, ասոր յաջորդող Պատրիարքներու թուականով.

«Ցամին ՌՈՒԽԳին (= 1643) բազումք գրեցին առ փափն Ուռպանոս Ըներորդ զգաւանութիւն կաթուղիկէի հաւատոյ, այս է՝ Ցոհաննէս Խուլ վարդապետ կոչեցեալ, գոլով յայնժամ պատրիարգ Կ.Պոլսոյ, Զաքարիաս վարդապետ, Կիրակոս վարդապետ Երեւանցի, Խաչատուր վարդապետ Գաղատիացի, Պօղոս Վ. եպիսկոպոս Տիվրիկոյ։ Որոց առաջինն գրեաց զդիրդ մի ընդդէմ Մխիթարեանց եւ վկայութեամբ գրոց սրբոց եւ Հարց յայտնապէս եցոյց զերկուս բնութիւնս, ներգործութիւնս եւ կամս գոլ ի Քրիստոս, եւ զդեղեուկն Ոգւոյն սրբոյ ի Հօրէ, եւ յՈրդւոյ։» (Հեռագիր Մա. Մխ. Վիեննա. Թ. 37։)